

## Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր պարագիտային հիվանդությունները (անթրոպոզոոնոզներ)

Որոշ պարագիտային հիվանդություններ փոխանցվում են մարդկանց հիվանդ կենդանիների հետ շփումից, կենդանական ծագում ունեցող վարակված մթերքի կամ վարակված միջավայրի միջոցով: Անասնապահությամբ զբաղվող տնտեսության համար շատ կարևոր է տեղյակ լինել այդ հիվանդությունների և դրանց փոխանցման ուղիների մասին:

Մարդու և կենդանիների համար ընդհանուր են.

- էլիինոկոկոզ,
- տավարի և խոզերի ցիստիցերկոզներ (եզան երիզորդ, լայն երիզորդ),
- ֆասցեյոզ,
- խոզերի տրիխինելլոզ
- ինչպես նաև ասկարիդների թրթուրների կողմից հարուցվող և այլ վտանգավոր մակաբուծային հիվանդությունները:

**Էլիինոկոկոզը** կենդանիներից մարդուն փոխանցվող ամենավտանգավոր և դժվար բուժվող պարագիտային հիվանդություններից մեկն է: Մարդը էլիինոկոկոզի հարուցչի համար հանդիսանում է համաճարակաբանական փակուղի (այսինքն մարդը հիվանդանալով, ոչ մեկին չի վարակում): Մարդիկ էլիինոկոկոզով հիմնականում վարակվում են շների հետ անմիջական շփման ճանապարհով՝ հարուցչի ձվեր կուլ տալով, որոնք արտազատում են շները և գայլերը կղանքի հետ: Եթե ձեր ֆերմայում շները հիվանդ են էլիինոկոկոզով, ապա նրանք ձեզ շրջապատող ամբողջ տարածքը վարակում են էլիինոկոկի ձվերով: Այս դեպքում էլիինոկոկի ձվերը կարող են փոխանցվել մարդուն.

- ոչխարների կթի և խուզի ժամանակ (էլիինոկոկի ձվերը կպած են լինում ոչխարի բրդի վրա)
- մրգերի, բանջարեղենի, կանաչեղենի միջոցով:

Էլիինոկոկի ձվերով վարակված մարդկանց ներքին օրգաններում, հատկապես լյարդում, առաջանում են բշտեր, որոնց բուժումը միայն վիրահատական է: Հիվանդ մարդկանց մոտ անընդհատ առաջանում են թունավորման երևույթներ, ջերմության բարձրացում, ընկճվածություն և այլ նշաններ:

Որպեսզի խուսափեք վարակումից, անհրաժեշտ է տնտեսությունում պարբերաբար իրականացնել էլիինոկոկոզի տարածումը կանխարգելող միջոցառումներ :

Մարդը **ցիստիցերկոզներով** վարակվում է՝ ուտելով ցիստիցերկոզով հիվանդ տավարի կամ խոզի կիսահում միս, որտեղ գտնվում են ցիստիցերկոզի թրթուրները: Անցնելով մարդու օրգանիզմ՝ այդ թրթուրները տեղակայվում են մարդու աղիքների մեջ և դառնում են որդ, որոնց երկարությունը հասնում է մինչև 6 մետր, կայում են բարակ աղիքներին և մնում տարիներով: Նկատվում են նույն նշանները, ինչպես էլիինոկոկոզով վարակման ժամանակ: Դեղանյութերով բուժումը շատ դժվար է:

Վարակումից խուսափելու համար.

- հնարավորին չափով գերծ պահեք կենդանիներին վարակումից,
- խուսափեք խոզի և տավարի մսի կիսահում վիճակում օգտագործումից,

- անհրաժեշտ է հոգալ գուգարանների սանիտարական մաքրության մասին:

Մարդիկ **ֆասցեյոզով** շատ հազվադեպ են հիվանդանում: Այսինքն մարդը կարող է վարակվել ֆասցեյոզով միայն խմելով կանգնած լճակների քաղցրահամ ջուրը: Վարակումից խուսափելու համար *արգելվում է* օգտագործել կանգնած լճակների քաղցրահամ ջուրը (արոտավայր կամ դաշտ գնալիս ձեզ հետ միշտ վերցրեք խմելու ջուր կամ օգտվեք միայն աղբյուրի ջրից):

**Խոզերի տրիխինելյոզով** մարդիկ վարակվում են ուտելով տրիխինելյոզով հիվանդ խոզի միս: Նրանում գտնվող թրթուրները, անցնելով մարդու օրգանիզմ, տեղակայվում են մկաններում, կրակալվում ու մնում մարդու ողջ կյանքի ընթացքում: Կրակալված թրթուրները առաջացնում են պարբերական ցավեր, նաև՝ ալերգիա ու թունավորումներ: Բուժում չկա: Հիվանդությունը ձգվում է երկար տարիներ և հաճախ ավարտվում է մահով: Այս հիվանդության պահեստարան են համարվում վայրի խոզերը: Հիվանդությունը տարածված է հիմնականում այն վայրերում, որտեղ խոզերը արածում են անտառներում:

Վարակումից խուսափելու համար.

- զերծ մնացեք խոզերի՝ անտառներում արածացնելուց,
- խուսափեք խոզի մսի կիսահում վիճակում օգտագործումից,
- վայրի խոզի միսը օգտագործեք ստուգումից հետո: